N-ARM-2025-3032

«Ա.Դ. ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« Մարդու իրավունքների պաշտպանություն և քաղաքացիական հասարակության հզորացում» ծրագիր

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Գավառ

2026

Ներածություն

Սույն հետազոտությունն իրականացվել է «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ-ի Գեղարքունիքի մարզում ՀՎԿ համակարգող Վարդան Գարեյանի կողմից: Տեղեկության հավաքագրման գործընթացում ներգրավվել է նաև Գավառի պետական համալսարանի Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի «Իրավագիտություն» մասնագիտության երկրորդ կուրսի ուսանողուհի Միլենա Դարբինյանը:

Հետազոտությունն ուղղված է Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ բուհեր) ուսանողական կրթաթոշակների համակարգի, այն է՝ կրթաթոշակների, դրանք տրամադրող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրմանը և ուսումնասիրմանը:

Թեման ընտրվել է՝ ելնելով վերջինիս սոցիալական և կրթական կարևորությունից, ինչպես նաև ուսանողության շրջանում առկա հետաքրքրվածությունից:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել Հայաստանի Հանրապետությունում գործող բուհերում սովորող ուսանողներին կրթաթոշակներ տրամադրող կառույցների շրջանակն ու կոնտակտային տվյալները:

Ուսանողական կրթաթոշակները ոչ միայն ֆինանսական աջակցության, այլև կրթության իրավունքի իրացման, սոցիալական խոցելի խմբերի համար հավասար կրթական հնարավորությունների ստեղծման և մարդկային ներուժի բացահայտման գործոն են:

Հարկ է նշել, որ պետական կրթաթոշակների տրամադրման գործընթացում հիմնականում առաջնահերթություն է տրվում ակադեմիական առաջադիմությանը, մինչդեռ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սոցիալական, առողջական վիճակի, մայրաքաղաքի ու մարզերի միջև առկա անհավասարությունների և այլ հիմնավոր գործոնների ներառումը ընտրության չափանիշներում գործնականում ոչ միշտ է ապահովվում բավարար չափով:

Հետազոտության շրջանակներում հնարավորինս համակարգվել է Հայաստանում գործող ուսանողական կրթաթոշակային ծրագրերի մասին տեղեկատվությունը, փորձ է կատարվել այն ներկայացնել պարզ և մատչելի ձևով:

Հետազոտության արդյունքները հիմնված են բաց աղբյուրների, պաշտոնական փաստաթղթերի, կրթաթոշակ տրամադրող կառույցների հրապարակումների և ոլորտային վերլուծությունների ուսումնասիրության վրա՝ նպատակ ունենալով ապահովել տվյալների առավելագույն ճշգրտությունն ու կիրառելիությունը:

Սույն հետազոտությունը կարող է օգտակար լինել կրթական ոլորտում նոր կրթաթոշակային մոդելների մշակման և շահագրգիռ կողմերի միջև համագործակցության խթանման համար՝ նպաստելով բարձրագույն կրթության իրական հասանելիությանը և մարդկային կապիտալի զարգացմանը Հայաստանում:

Հետազոտության շրջանակներում պատրաստված՝ ուսանողական կրթաթոշակներ տրամադրող կազմակերպությունների տվյալներն իրենց հերթին կարող է օգտակար լինել ուսանողներին տեղեկատվության, կրթաթոշակային ծրագրերին դիմելու, ինչպես նաև կրթաթոշակներ տրամադրող կազմակերպություններին և քաղաքացիական հասարակության կառույցներին՝ նրանց կողմից ոլորտային ընթացակարգերի նախագծման և ուսանողների համար պարզ ու կանխատեսելի չափորոշիչների ձևավորման համար:

ՀՀ բուհերի ուսանողական կրթաթոշակների տրամադրման իրավական հիմքերը

Հայաստանի Հանրապետությունում կրթաթոշակները տրամադրվում են ինչպես պետության, այնպես էլ մի շարք միջազգային կազմակերպությունների, բարեգործական հիմնադրամների, մասնավոր ընկերությունների, բարեգործական հիմնադրամների և քաղաքացիական հասարակության կառույցների կողմից:

«Կրթաթոշակ» հասկացությունը «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի[1] իմաստով սահմանվում է որպես պետության, բուհի, մասնավոր կազմակերպությունների, միջազգային կառույցների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ անհատների կողմից կրթության շարունակականությունը կամ ուսումնառության ընթացքն ապահովելու նպատակով սովորողներին անհատույց տրամադրվող դրամական աջակցություն, որը կարող է տրվել բուհ ընդունելության արդյունքների կամ ուսումնառության ընթացքում ցուցաբերած առաջադիմության, այլ ձեռքբերումների, նպատակային ուսուցման կամ ուսանողի կարգավիճակով պայմանավորված այլ դեպքերում:

Ըստ նույն օրենքի 41-րդ հոդվածի՝

- Պետության կողմից տրամադրվող ուսումնառության կրթաթոշակի տրամադրման կարգը, ներառյալ դրան հավակնելու և դրանից զրկվելու պայմանները սահմանվում են Կառավարության որոշմամբ:
- Պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցման համար տրամադրվող կրթաթոշակի կարող են հավակնել միայն հավատարմագրված կրթական ծրագրերով լրիվ բեռնվածությամբ բարձրագույն կրթական ծրագրով առաջին անգամ սովորող ուսանողները: Ուսումնառությունը մասնակի բեռնվածությամբ շարունակելու դեպքում ուսանողը զրկվում է այդ կրթաթոշակը ստանալու հնարավորությունից:
- Բուհը վճարովի ուսուցմամբ սովորող ուսանողական համակազմի առնվազն 10 տոկոսին ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն հինգ տոկոսի չափով հատկացնում է ուսանողական կրթաթոշակի ձևով ուսման վարձի ամբողջական կամ մասնակի փոխհատուցում՝ նախապես հաստատված և հրապարակված պայմաններով:
- Պետական բյուջեից նպատակային ուսուցման համար կրթաթոշակ կարող են ստանալ Կառավարության կողմից առաջատար ճանաչված օտարերկրյա բուհերում Հայաստանի Հանրապետության համար առաջնահերթություն հանդիսացող մասնագիտություններով բարձրագույն կրթություն ստացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ Կառավարության սահմանած կարգով և պայմաններով:
- Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ սահմանված կարգով պայմանագիր կնքած քաղաքացիների ուսումնառությունը կազմակերպում է բուհը՝ պետության կողմից ուսումնառության կրթաթոշակների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ:

[1] https://www.arlis.am/hy/acts/214346

ՀՀ Կառավարության 27.07.2006թ. № 1183-Ն որոշմամբ[2]՝ պետական կրթաթոշակը պետական ֆինանսական խրախուսանք է՝ ուսանողներին պետական կրթաթոշակ է տրվում գերազանց և լավ առաջադիմության, հասարակական ակտիվության, պատշաճ վարքագիծ դրսևորելու համար (արվեստի բնագավառի բուհերում՝ նաև մասնագիտական մրցույթ-ստուգատեսների հաղթողներին), ինչպես նաև նպատակային ուսուցմամբ սովորող սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի ուսանողներին:

Պետական կրթաթոշակների ձևակերպման գործընթացն իրականացնում է բուհը:

Բուհը կարող է սեփական միջոցների հաշվին սահմանել անվանական կրթաթոշակներ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեով բուհերի համար նախատեսված միջոցների սահմաններում՝

- ըստ բուհերի և մասնագիտությունների (կրթական ծրագրերի), բաշխում է պետության կողմից տրվող ուսանողական նպաստների քանակը (ուսման վճարի լրիվ փոխհատուցվող), որը տեղափոխվում է կուրսից կուրս:
- ըստ բուհերի, հաստատում է պետական կրթաթոշակների թիվը և չափը:

ՀՀ կառավարության 24.08.2023թ. № 1430-Ն[3] որոշմամբ սահմանվել են Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատություններում կամ կազմակերպություններում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով առկա ուսուցմամբ սովորողներին տրվող պետական կրթաթոշակի չափերը.

«ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի)՝ պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղեր ունեցող բուհերում պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով (կրթական ծրագրերով) սովորողներին՝

ա. առաջին կուրսում՝ 70.000 (յոթանասուն հազար) դրամ,

բ. հաջորդ կուրսերում նախորդ ուսումնական տարվա արդյունքներով միջին որակական գնահատականի (ՄՈԳ) առավելագույն արժեքի 90.01% և բարձր ՄՈԳ ունեցողներին 77.000 (յոթանասունյոթ հազար) դրամ, 80.01-90.00% ՄՈԳ ունեցողներին՝ 70.000 դրամ»:

Նույն որոշմամբ՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքով[4] նախատեսված ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններում կամ կազմակերպություններում բակալավրի և մագիստրոսի կրթական աստիճաններով առկա ուսուցմամբ, սովորողների կրթաթոշակը սահմանվել է 50.000 (հիսուն հազար) դրամ, իսկ «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» օրենքով[5] նախատեսված՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, ինչպես նաև առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող մինչև 23 տարեկան սովորողներին կրթաթոշակ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

Հարկ է նկատել, որ վերոնշյալ կրթաթոշակներին միաժամանակ հավակնելու դեպքում սովորողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է կրթաթոշակի առավելագույն չափ:

---

[2] https://www.arlis.am/hy/acts/202994
[3] https://www.arlis.am/hy/acts/207213
[4] https://www.arlis.am/hy/acts/152960
[5] https://www.arlis.am/hy/acts/51820

ՀՀ կառավարության նույն որոշմամբ հաստատվել է նաև պետության համար առաջնային և կարևորություն ներկայացնող մասնագիտությունների (կրթական ծրագրերի) ցանկը, որոնցով սովորելու դեպքում տրվում է պետական կրթաթոշակ (տե՛ս ցանկը սույն հետազոտական աշխատանքի 13-14-րդ էջում)։

Հետազոտության իրականացման ընթացքում հարցում է ուղարկվել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն՝ խնդրելով տրամադրել նախարարության հետ համագործակցող այն կազմակերպությունների անվանումները, որոնք կրթաթոշակ են տրամադրում ՀՀ բուհերի ուսանողներին (բացառությամբ միջազգային ծրագրերի կամ ուսանողական փոխանակման ծրագրերի)։

Ի պատասխան՝ նախարարությունը նշել է, որ ՀՀ-ում գործող ոչ պետական կազմակերպություններն իրենց գործունեությունը ծավալելիս ինքնուրույն են բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության ձևերը սահմանելու և ուսանողներին կրթաթոշակների տրամադրման քաղաքականությունը (այդ թվում՝ առաջնահերթությունները, կրթաթոշակի տրամադրման պայմանները և սահմանաչափերը) որոշելու հարցերում։

Նշվել է նաև, որ պետության կողմից նպաստի ձևով ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցման, ինչպես նաև պետական կրթաթոշակի տրամադրման պայմանները սահմանված են ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 27-ի № 1183-Ն որոշմամբ հաստատված կարգով, իսկ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով առկա ուսուցմամբ սովորող ուսանողներին տրամադրվող կրթաթոշակի չափերը և պայմանները սահմանված են ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի № 1430-Ն որոշմամբ։ Յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 29-ի № 1005-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն՝ անվանական կրթաթոշակներ են տրամադրվում նաև ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների լավագույն առաջադիմությամբ ուսանողներին՝ մրցութային կարգով։ Մրցույթն անցկացվում է բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով՝ ըստ հետևյալ ոլորտների՝

1) բնագիտական (այդ թվում՝ մաթեմատիկական-տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներ (ՏՀՏ),

2) բժշկություն,

3) հումանիտար գիտություններ,

4) հասարակագիտություն,

5) ճարտարագիտություն (այդ թվում՝ ճարտարապետական/գյուղատնտեսական),

6) մշակույթ-սպորտ,

7) հայագիտություն։

Մրցույթին կարող են մասնակցել առկա ուսուցմամբ բակալավրի կրթական ծրագրի 2-4-րդ կուրսերի, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ առաջին կիսամյակն ավարտած Հայաստանի Հանրապետության պետական և հավատարմագրված կրթական ծրագրեր իրականացնող ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները։

Տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում ևս սահմանված են ուսանողների համար կրթաթոշակներ, որոնք շնորհվում են Կառավարության 2022 թվականի մայիսի 13-ի № 675-Ն որոշմամբ հաստատված կարգով։ Վերջինիս շրջանակներում մրցանակաբաշխության

ֆինանսավորումն իրականացվում է «Սինոփսիս Արմենիա» ընկերության կողմից՝ համաձայն ընկերության և «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջև կնքված համաձայնագրի։

Նախարարությունը նաև տեղեկացրել է, որ այժմ ընթանում են պետության կողմից ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների տրամադրման նոր կարգի մշակման աշխատանքներ։

Մեր հարցման հիմնական հարցին ի պատասխան՝ նշվել է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը չի հավաքագրում և չի մշակում ուսանողներին կրթաթոշակներ տրամադրող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվություն։

Ըստ այդմ, սույն հետազոտության շրջանակներում փորձ է կատարվել հավաքագրել այն կազմակերպությունների անվանումները, որոնք կրթաթոշակ են տրամադրում ՀՀ բուհերի ուսանողներին (բացառությամբ միջազգային ծրագրերի կամ ուսանողական փոխանակման ծրագրերի), որոնք ներկայացված են աղյուսակում (տե՛ս սույն հետազոտական աշխատանքի էջ 10-12-րդ էջերը)։

Ուսանողական կրթաթոշակների անհրաժեշտությունը

ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ 2024-2025թթ.-ին հանրապետությունում ուսանում է շուրջ 53.920 (պետական և ոչ պետական համակարգերում միասին), այդ թվում՝ անվճար համակարգում՝ 9.830, վճարովի համակարգում՝ 44.090 ուսանող[6]:

Ըստ կրթության ոլորտի փորձագետ Սերոբ Խաչատրյանի՝ 2025թ.-ին հրապարակած «Monitoring report Higher education and non-formal, informal education» հետազոտության[7]՝ 2023-2024 ուսումնական տարում պետական բուհերի ուսանողների միայն 16.2%-ն է ստացել պետական կրթաթոշակներ, մինչդեռ 83.8%-ը ստիպված է եղել վճարել ուսման վարձը: Բարձրագույն կրթությունը ստացել է պետական կրթության ընդհանուր բյուջեի ընդամենը 7-8%-ը, ինչը զգալիորեն պակաս է, քան ընդհանուր կրթությունը (66%): Ըստ նույն հետազոտության՝ Հայաստանի բարձրագույն կրթության համակարգը բախվում է լուրջ թերֆինանսավորման խնդրի՝ զբաղեցնելով համաշխարհային 100-րդ տեղը ֆինանսավորման առումով:

Հատկանշական է, որ ուսման վարձը կամ կեցության ծախսերը հոգալու նպատակով ուսանողները ձգտում են աշխատել, ինչը, բնականաբար, անդրադառնում է ուսման որակի և ակադեմիական առաջադիմության վրա:

Համաձայն staff.am-ի հրապարակած «ՀՀ աշխատաշուկա 2025 զեկույցի»[8]՝ ուսանողներն աշխատաշուկայի ընդամենը 2.9%-ն են կազմում: Ըստ զեկույցի՝ Հայաստանի բոլոր աշխատատեղերի 89.4%-ը գտնվում է Երևանում և միայն 10.6%-ը մարզերում՝ բոլոր մարզերը միասին վերցրած:

Այս առումով կրթաթոշակները չափազանց կարևոր նշանակություն ունեն հատկապես մարզաբնակ երիտասարդների՝ բարձրագույն կրթություն ստանալու համար:

Որպես օրինակ, համեմատենք Գեղարքունիքի մարզն ու Երևան քաղաքը՝ ըստ աշխատավարձերի միջին անվանական չափերի և բուհերի վարձավճարների՝ նկատի ունենալով, որ աշխատավարձերի չափերը էականորեն տարբերվում են:

Ըստ «ՀՀ աշխատաշուկա 2025 զեկույցի»՝ 2025թ.-ին ամենացածր միջին աշխատավարձերը շարունակում են գրանցվել Գեղարքունիքի մարզում (149.470 դրամ), որը կազմում է հանրապետական միջին աշխատավարձի ընդամենը 50.5%-ը:

Գեղարքունիքի մարզում գործում է միայն մեկ բարձրագույն ուսումնական հաստատություն՝ Գավառի պետական համալսարանը: Այստեղ ուսման տարեկան վարձավճարի չափը բակալավրիատի կրթական ծրագրի համար կազմում է 430.000 ՀՀ դրամից մինչև 580.000 ՀՀ դրամ[9]՝ կախված մասնագիտությունից: Եթե այդ տվյալները համադրենք նվազագույն սպառողական զամբյուղի հետ (որն անհրաժեշտ է մեկ անձին մեկ ամսվա ընթացքում նվազագույն պահանջները բավարարելու համար), կստացվի, որ միջին վիճակագրական աշխատողը չի կարող իրեն թույլ տալ բուհում սովորող անգամ մեկ ուսանողի կրթության համար վճարել՝ առանց կրթաթոշակի առկայության:

Դիտարկենք այն օրինակը, երբ ընտանիքում կա մեկ աշխատող և մեկ ուսանող: Եթե 580.000 ՀՀ դրամ ուսման վարձավճարը բաժանենք 12 ամիսների, կստանանք ամսական 48.333 ՀՀ դրամ, որն ուսանող ունեցող ընտանիքի կողմից պետք է վճարվի ընտանեկան

---

[6] https://armstat.am/file/article/sv_03_25a_5140.pdf
[7] https://cepacso.am/storage/files/documents/2025-09-07/Full%20report_Higher%20education.pdf
[8] https://staff.am/staffmedia/labor-market-2025/
[9] https://gsu.am/wp-content/uploads/2024/11/25-26-ուս-տարվա-առկա-բակալավրի-վարձեր.pdf

բյուջեից՝ որպես ուսման վարձավճար: Եթե միջին ամսական 149.470 դրամ աշխատավարձից հանենք 48.333 ՀՀ դրամ ուսման վարձավճարը, ապա ընտանիքին ծախսելու համար կմնա ընդամենը 101.137 ՀՀ դրամ: Եթե հաշվի առնենք, որ մեկ անձի ամսական կարիքների բավարարման սահմանաչափը կազմում է 77.065 ՀՀ դրամ[10], ապա ընտանիքը չի կարող բավարարել նույնիսկ նվազագույն պահանջմունքները:

Այժմ դիտարկենք նաև Երևանում միջին ամսական աշխատավարձը և որպես օրինակ՝ ԵՊՀ ուսման վարձավճարների չափերը:

Երևան քաղաքը 2025 թվականին 339.025 ՀՀ դրամ ամսական միջին անվանական աշխատավարձի չափով հանրապետությունում զբաղեցրել է երկրորդ հորիզոնականը, ինչը երկրում միջին աշխատավարձի ցուցանիշից ավել է մոտավորապես 14.6%-ով:

Իսկ ԵՊՀ-ում 2025-2026թթ. ուսումնական տարվա վարձավճարները[11] տատանվում են տարեկան 550.000-1.425.000 ՀՀ դրամի սահմաններում:

Այսպես, եթե, օրինակ, 1.425.000 ՀՀ դրամը բաժանենք 12 ամիսների, կստանանք 118.750 ՀՀ դրամ, որը պետք է վճարվի ընտանեկան բյուջեից՝ որպես ուսման վարձավճար: Այս դեպքում, եթե ամսական միջին 339.025 դրամ աշխատավարձից հանենք 118.750 ՀՀ դրամը, ընտանիքին ծախսելու համար կմնա 220.275 ՀՀ դրամ, որը, ի տարբերություն մարզաբնակ ընտանիքի, կբավարարի երեք անձի ամսական նվազագույն կարիքների բավարարմանը:

Վերոնշյալ օրինակները փաստում են Երևանում և մարզերում բուհական կրթության հնարավորությունների անհավասարաչափ բաշխման մասին:

[10] https://armstat.am/am/?id=1075&nid=157&utm

[11] https://www.ysu.am/documents/75750

Եզրակացություն

Կրթության հավասար հնարավորությունների ստեղծման և անընդհատության ապահովման առումով կրթաթոշակները զբաղեցնում եմ առանցքային դեր հայաստանյան բուհերում սովորող ուսանողների համար։

Հայաստանի Հանրապետության բուհերում կրթաթոշակների տրամադրման համակարգը հիմնված է երեք պայմանների վրա՝ ակադեմիական գնահատական, սոցիալական կարիք, ուսանողի պատասխանատվություն ու ներգրավվածություն տարբեր նախաձեռնություններում։ Բացի այդ, ուսանողը պետք է նաև սովորի առկա ուսուցման ֆակուլտետում։

Մյուս կողմից, ելնելով իրենց կրթության ֆինանսավորման պահանջից, երիտասարդները ձգտում են մտնել աշխատաշուկա՝ իրականացնելով ոչ նախընտրելի աշխատանք։

Բարձրագույն կրթություն ստացող ուսանողների զգալի մասը՝ ավելի քան 60%-ը, ուսանում է վճարովի համակարգում, մինչդեռ պետական կրթաթոշակներից օգտվում է ուսանողների միայն փոքր հատվածը՝ շուրջ 16.2%-ը պետական բուհերում։ Ստացվում է, որ կրթաթոշակներ տրամադրող ոչ պետական կազմակերպությունները մոտ մեկուկես անգամ ավելի շատ ուսանողների են կրթաթոշակ տրամադրում, քան պետությունը։

Հատկապես մտահոգիչ է բարձրագույն կրթություն ստանալու տեսանկյունից մայրաքաղաքի և մարզերի միջև առկա անհավասարության խնդիրը։ Աշխատաշուկայի գերակշիռ մասը կենտրոնացած է Երևանում, իսկ մարզերում միջին աշխատավարձերի ցածր մակարդակը, ինչպես, օրինակ՝ Գեղարքունիքի մարզում, լրջորեն սահմանափակում է ընտանիքների կարողությունը ֆինանսավորելու իրենց երեխաների բարձրագույն կրթությունը։

Նվազագույն սպառողական զամբյուղի և միջին աշխատավարձի համադրությունն իր հերթին փաստում է, որ միջին վիճակագրական ընտանիքի համար բուհում ուսման վարձավճար կատարելը առանց կրթաթոշակների հաճախ դառնում է սոցիալ-տնտեսական անհաղթահարելի բեռ։

Այսպիսով, Հայաստանում ուսանողական կրթաթոշակների համակարգը կարիք ունի բարեփոխումների ներքոնշյալ ուղղություններով.

1. սոցիալական արդարության և ներառականության բարձրացում,
2. մարզաբնակ և սոցիալապես խոցելի ուսանողների համար նպատակային աջակցությունների ընդլայնում,
3. կրթաթոշակային ծրագրերի ֆինանսավորման և ծածկույթի մեծացում,
4. կրթաթոշակների տրամադրման ժամկետների, կարգի ու չափերի մասին տեղեկատվության համակարգում և հասանելիության ապահովում։

Աղյուսակ. Հայաստանի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողական կրթաթոշակներ տրամադրող կազմակերպություններ

Կրթաթոշակ տրամադրող կազմակերպություններ	Կոնտակտային տվյալներ	Հավելյալ տեղեկություն
ՀՀ ԿԳՄՄՆ	https://escs.am/am	Պետական կրթաթոշակներ բակալավրի և մագիստրոսի մակարդակում՝ որոշ մասնագիտություններով («գերակա» ուղղություններ) հաստատված չափերով՝ պետական բյուջեից:
Հայ կրթական հիմնարկություն	https://aef.am/	Կրթաթոշակային ֆոնդի 90% ամերիկահայ հովանավորներ են, ովքեր ուզում են անհայտ մնալ:
«Մատենա» միջազգային բիզնես դպրոց	https://matena.am/hy	«Մատենայի» առաքելությունն է՝ որպես Հայաստանում հիմնադրված միջազգային դպրոց, գիտելիքի կուտակման, զարգացման և համաշխարհային առաջավոր փորձի տարածման միջոցով նպաստել մասնագիտական հմտությունների և առաջնորդության որակների զարգացմանը նրանց համար, ովքեր մշտապես ձգտում են մասնագիտական ու անհատական աճի՝ հնարավորություն տալով նրանց խթանել առաջընթացը, նորարարությունն ու գերազանցությունը թե՛ սեփական ոլորտներում, թե՛ դրանցից դուրս:
«Ժիրայր Նիշանյան» բարեգործական հիմնադրամ	https://nuaca.am/archives/ads/ժիրայր-նիշանյան-հիմնադրամի-կրթավճա-2/	Կրթաթոշակները գլխավորապես տրամադրում է Հայ օգնության ֆոնդի միջոցով:
«Ամերիկայի Հայ Ավետարանչական ընկերակցություն»	https://amaa.am/	Իրականացնում է կրթաթոշակի ամենամյա ծրագիրը Հայաստանի պետական ու միջպետական բուհերի՝ ուսուցման առկա համակարգում սովորող կամ սովորել պատրաստվող ուսանողների համար:
«Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր սեղան հիմնադրամ»	https://www.roundtable-act.am/	ՀԿՍ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում և Արցախում (Լեռնային Ղարաբաղում) աղքատության նվազեցմանը, հոգևոր-բարոյական արժեքներով առաջնորդվող, օրինականության և արդարության սկզբունքներով ապրող հասարակության կայացմանը, ինչպես նաև խաղաղությանն ու տարածաշրջանային հաշտեցմանը, քաղաքացիական հասարակության հզորացմանը՝ դիակոնիկ ու զարգացման ծրագրերի իրականացման միջոցով:
«Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամ	https://gulbenkian.pt/armenian-communities/hy/about/	Հիմնականում կենտրոնացած է հայագիտության, լեզվի պահպանման և Սփյուռքի վրա, սակայն ունի դրամաշնորհներ ՀՀ-ում գիտական հետազոտությունների և ասպիրանտների համար:
FAST հիմնադրամ (Foundation for Armenian Science and Technology)	https://fast.foundation/	Կրթաթոշակներ տրամադրելու ուղղվածություններն են՝ գիտություն և տեխնոլոգիաներ (STEM):
Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամ	https://eif.am/	Համագործակցում է մասնավոր ընկերությունների հետ (օրինակ՝ PMI Science, Synopsis Armenia):

(EIF)		Տրամադրում է ֆինանսավորում մագիստրոսներին և ասպիրանտներին, ովքեր զբաղվում են ճարտարագիտությամբ, տվյալագիտությամբ և ֆիզիկայով:
Թրփանճեան ընտանեկան հիմնադրամ	https://trdp.aua.am/hy/	Հիմնականում աջակցում է Հայաստանի Ամերիկյան Համալսարանի (AUA) ուսանողներին, բայց ունի նաև տարածաշրջանային զարգացման ծրագրեր:
«Քեն Կակոսյան ընտանիք» կրթաթոշակային հիմնադրամ	Առանձին կոնտակտ չգտնվեց	Հիմնականում տրամադրում է կրթաթոշակներ Երևանի պետական և Հայաստանի ազգային ագրարային համալսարանների ուսանողներին:
«Հայաստանի մանուկներ» հիմնադրամ (ՔՈԱՖ)	https://www.coaf.org/hy	Կրթաթոշակներ է տրամադրում այն ուսանողներին, ովքեր ապրում են COAF-ի շահառու գյուղերում (հիմնականում Լոռու և Արմավիրի մարզեր):
«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ	https://freenergy.am/portfolio/diaconia-charitable-fund/	Գործում է 2001թ.-ից՝ մի շարք սոցիալական, կրթական և զարգացման ծրագրեր իրականացնելու համար՝ աջակցելով անապահով ընտանիքներին, երեխաներին, տեղահանված անձանց և այլ խոցելի խմբերի:
«Օյունջյան» բարեգործական հիմնադրամ	https://ounjianfoundation.org/	Հիմնադրամն ամեն տարի համալսարանական կրթաթոշակներ է տրամադրում ավելի քան 50 ուսանողների: Կրթաթոշակառուները Օյունջյան դպրոցի շրջանավարտներն են, ովքեր ցուցաբերում են հատուկ կարողություններ և բարձր միավորներ են ստանում համալսարանական քննություններում:
«Հայկական բարեգործական ընդհանուր միություն» AGBU	https://agbu.am/am	ՀԲԸՄ-ն միջազգային մակարդակով կրթաթոշակային լայն հնարավորություններ է առաջարկում սովորողներին: Անհատներին ու հաստատություններին տրամադրում է հետազոտական դրամաշնորհներ հայագիտության տարբեր ասպարեզներում: Հայաստանում նշանակալի աջակցություն է ցուցաբերում համալսարաններին՝ Հայաստանի ամերիկյան համալսարանին, Երևանի պետական համալսարանին և Հայաստանում ֆրանսիական համալսարանին:
«ԿԱԶԱ» հիմնադրամ	https://kasa.am/hy/	1998թ.-ից ի վեր «ԿԱԶԱ» հիմնադրամը տարեկան մոտ 20 կրթաթոշակ է տրամադրել օժտված, ակտիվ և նախաձեռնող ուսանողներին:
«Հայ օգնության ֆոնդ»	https://www.farusa.org/?lang=hy	Իրականացնում է կրթական և գիտական աջակցության նախագծեր:
«Irene Gyulnazarian Educational Fund»	https://igefafund.org/about-igefa/	Կազմակերպությունը աջակցում է ակադեմիական և մշակութային հաստատություններին, նպաստում է Հայաստանում կրթության որակի բարելավմանը:
«Հույս հիմնադրամ»	https://huysfoundation.org/	Կրթաթոշակ է տրամադրում առնվազն երկու արժանավոր կրթաթոշակառուների, ովքեր սովորում են Հայաստանում գործող կրթական հաստատություններում լրիվ դրույքով ակադեմիական ծրագրով և ունեն իրենց հետաքրքրության ոլորտում հաստատված ձեռքբերումներ, մասնավորապես՝ մասնակցություն գիտահետազոտական աշխատանքներին կամ ներգրավվածություն գործնական, արդյունաբերական ոլորտային նախագծերի մեջ:

«Լույս հիմնադրամ»	https://www.luys.am/	«ԼՈՒՅՍ» հիմնադրամը եռակի առաքելություն ունի՝ Սովորել, Գործել, Համաստեղծել:
Ամերիաբանկ	https://ameriabank.am/	Իրականացնում է ուսանողների համար կրթաթոշակային ծրագիր, որը կոչվում է «Իմ Հայաստան, իմ ապագա» (My Armenia, My Future) մրցույթ: Այս մրցույթի շնորհիվ բուհերում սովորող լավագույն ուսանողներին տրամադրվում են հետաքրքիր կրթաթոշակներ հատկապես ակտիվության, առաջադիմության և մոտիվացիայի համար:
«Synopsys Armenia»	https://www.synopsys.com/company/contact-synopsys/office-locations/armenia.html	Համագործակցում է մի շարք հայկական բուհերի հետ՝ ապահովելով ուսուցում IC նախագծման, EDA-ի և այլ ինժեներական ոլորտների մասնագիտական ծրագրերով: Ուսանողները կարող են մասնակցել բակալավրիատ, մագիստրատուրա և PhD ծրագրերի շրջանակներում՝ մի շարք հատուկ դասընթացներով, լաբորատորիաներով և ուսումնական ռեսուրսներով:
Picsart	https://picsart.com/	Հիմնականում կրթաթոշակներ ու անվճար սովորելու հնարավորություններ է տրամադրում SS ոլորտի ուսանողներին:
«IDeA» հիմնադրամ	https://www.idea.am	IDeA-ն Հայաստանում գրանցված շահույթ չհետապնդող բարեգործական բազմապրոֆիլ հիմնադրամ է: Կառույցի նպատակն է՝ ամբողջ աշխարհում Հայաստանի և հայկական ինքնության ամրապնդմանն ու բարգավաճմանն ուղղված տնտեսական, սոցիալական ու մշակութային երկարաժամկետ ծրագրերի, ինչպես նաև սոցիալական ազդեցության համաշխարհային այլ նախաձեռնությունների աջակցության իրականացումն ու օժանդակումը:
«Հայաստանի ամերիկյան համալսարան»	https://aua.am/	Ունի կրթաթոշակների տրամադրման շատ ճկուն համակարգ՝ Tuition Assistance (ֆինանսական կարիքի հիման վրա) և Merit-based (ակադեմիական գերազանցության):
«Հայաստանում ֆրանսիական համալսարան»	https://www.ufar.am/	Ունի Ֆրանսիայի կառավարության և մասնավոր դոնորների կողմից տրամադրվող կրթաթոշակներ (ըստ սոցիալական վիճակի):
«Ռուս-Հայկական համալսարան»	https://rau.am/am	Բուհն ունի Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրվող անվճար տեղեր:
«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան»	https://polytech.am/	Ունի ուսանողական խորհրդի և ռեկտորատի կողմից տրամադրվող զեղչեր՝ հասարակական ակտիվության և բարձր առաջադիմության համար:
«Երևանի պետական համալսարան»	https://www.ysu.am/	Ունի ուսանողական խորհրդի և ռեկտորատի կողմից տրամադրվող զեղչեր՝ հասարակական ակտիվության և բարձր առաջադիմության համար:

Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի № 1430-Ն որոշման
Ց Ա Ն Կ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ), ՈՐՈՆՑՈՎ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՏՐՎՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿ

Մասնագիտական մանկավարժություն

011401.04.06 Ֆիզիկա
011401.04.07 Ֆիզիկա
011401.12.06 Տեխնոլոգիա և ձեռնարկչություն
011401.12.07 Տեխնոլոգիա և ձեռնարկչություն
011401.05.06 Մաթեմատիկա
011401.05.07 Մաթեմատիկա
011401.06.06 Ինֆորմատիկա
011401.06.07 Ինֆորմատիկա
011401.02.06 Քիմիա
011401.02.07 Քիմիա
011401.01.06 Կենսաբանություն
011401.01.07 Կենսաբանություն
011401.03.06 Աշխարհագրություն
011401.03.07 Աշխարհագրություն
011401.30.06 Մաթեմատիկա-ֆիզիկա
011401.31.06 Մաթեմատիկա-ինֆորմատիկա
011401.32.06 Կենսաբանություն-քիմիա
011401.33.06 Աշխարհագրություն-բնագիտություն

Ագրարային ճարտարագիտություն

071804.01.06 Մեքենասարքավորումների ճարտարագիտություն
071804.01.07 Մեքենասարքավորումների ճարտարագիտություն
071804.02.06 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
071804.02.07 Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն
071804.03.06 Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ
071804.03.07 Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ
071804.04.06 Ճշգրիտ գյուղատնտեսություն
071804.04.07 Ճշգրիտ գյուղատնտեսություն

Պարենամթերքի տեխնոլոգիա

072101.01.06 Պարենամթերքի տեխնոլոգիա
072101.01.07 Պարենամթերքի տեխնոլոգիա
072101.02.06 Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն
072101.02.07 Խմորման արտադրության տեխնոլոգիա և գինեգործություն
072101.03.06 Սննդամթերքի անվտանգություն

072101.03.07 Սննդամթերքի անվտանգություն

Ագրոնոմիա

081101.01.06 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա
081101.01.07 Ագրոնոմիա
081101.02.06 Բույսերի պաշտպանություն
081101.02.07 Բույսերի պաշտպանություն
081101.03.06 Ջերմատնային ագրոտեխնոլոգիա
081101.03.07 Ջերմատնային ագրոտեխնոլոգիա
081101.04.07 Օրգանական գյուղատնտեսություն

Անասնաբուծություն

081102.02.06 Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա
081102.02.07 Կենդանագիտություն և կենսատեխնոլոգիա

Անտառային տնտեսություն

082101.01.06 Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում
082101.01.07 Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում

Անասնաբուժություն

084101.01.06 Անասնաբուժություն
084101.01.07 Անասնաբուժություն
084101.02.06 Անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն
084101.02.07 Անասնաբուժական-սանիտարական փորձաքննություն